

Մկրտիչ Դ. Դանիելյան (Վանաձոր)
Պատմ. գիտ. թեկնածու

ԶԱՎԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱՐՈՂՆԻԿԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ*

Զավարյանի քաղաքական հայացքների ձևավորման և գործունեության առաջին շրջանի վրա մեծ ազդեցություն են ունեցել ռուսական հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսությունն ու գործելակերպը:

1870-ական թվականներին և 1880-ական թվականների սկզբներին ռուսական հասարակական-քաղաքական շարժումների մեջ գերիշխող դիրք ուներ հեղափոխական նարոդնիկությունը, որի գաղափարախոսությունը որոշակի տարածում գտավ նաև հայ իրականության մեջ: 1870-ականներին նարոդնիկական առաջատար կազմակերպությունները, մասնավորապես «Զեմյա ի վոյան» մեծ ուշադրություն էին դարձնում ազգային հարցին: «Զեմյա ի վոյա»-ի երկրորդ և վերջնականապես խմբագրված ծրագրում շեշտվում էր, որ «... Ռուսական կայսրության մեջ մտնում են այնպիսի վայրեր և ազգություններ, որոնք, առաջին իսկ հնարավորության դեպքում, պատրաստ են առանձնանալու, ինչպես օրինակ՝ Մալոռուսիան, Լեհաստանը, Կովկասը և այլն: Հետևաբար՝ մեր պարտականությունն է նպաստել ներկայիս Ռուսական կայսրության մասնատմանը տեղական ցանկություններին համապատասխան»¹:

Հեղափոխական նարոդնիկության նման դիրքորոշման պայմաններում արևելահայ երիտասարդության շրջանում ձևավորվեց մի հոսանք, որը անմնացորդ կերպով ներգրավվեց համառուսաստանյան շարժումների մեջ: Զավարյանի վկայությամբ՝ ««Ինտերնասիոնալի», «նիհիլիզմի»-անհատի, ազգերի, մարդկութեան ազատագրութեան հովերն էին, որ կը փչէին շրջապատողներիս վրայ՝ տղամարդ թէ աղջիկ՝ ռուս հայ, վրացի, թուրք, նոյնիսկ չերքեզ, լեհ...«Ազգութեան» խնդիր չկար մէջտեղ: Բոլորին էլ կը կապէր ռուսաց լեզուն»²:

Հայ երիտասարդությունը, ակտիվորեն մասնակցելով նարոդնիկական շարժմանը, 1870-ականներին անվերապահորեն ընդունում էր հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսությունը և դեռևս չէր փորձում այն հարմարեցնել հայ իրականությունից բխող խնդիրներին կամ էլ

*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.12.2013:

1 "Архив "Земли и воли" и "Народной воли", М. 1932. с. 55.

2 Զաւարեան Ս., Մանկութեան յիշողութիւններէն, «Վաթսունամեակ (1890-1950) Հ.Յ.Դ.», Պոսթըն, «Հայրենիք»-ի տպարան, 1950, էջ 1-2:

Ե (ՃԵ) քաղաք, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

վերջիններին լուծումը կապում էր համառուսաստանյան հեղափոխության հաղթանակի հետ:

Նարոդնիկական շարժման հետ պատանի Զավարյանի ծանոթությունը սկիզբ է առել է 1875-1876 թթ., երբ նա, հաստատվելով Թիֆլիսում՝ իր ազգական Վասիլ Շահվերդյանի բնակարանում, շփվում էր ինչպես վերջինիս, այնպես էլ նրա կնոջ՝ Մ. Նադեժդինայի ու նրանց այցելող քաղաքական գործիչների հետ: Վ. Շահվերդյանը և Մ. Նադեժդինան «...հեռացուած էին Պետերբուրգի համալսարանէն, իբրև համակիրներ Պիսարևի, Չերնիշևսկու և այլ ռուս արմատականների: Ուրիշները նոր էին վերադարձած Ցիւրիխէն, Զուիցերիայէն, Փարիզէն՝ իրենց հետ բերելով Լասսալի, Մարքսի, Բակունինի հովերը»³:

Բնականաբար՝ այս միջավայրը չէր կարող իր ազդեցությունը չունենալ Զավարյանի քաղաքական հայացքների ձևավորման ու նրա հետագա գործունեության վրա: Հայտնի է նաև, որ այս շրջանում Զավարյանն անդամակցել է 1879 թվականից գործող մի նարոդնիկական խմբակի: Այդ մասին տեղեկություն ենք ստանում նարոդնիկ, հետագայում ՀՅԴ հայտնի գործիչ, բժ. Հովհաննես Լոռու-Մելիքյանի (ցարական հայտնի գեներալի ազգականը) 1920 թ. հրատարակած հուշերից, ինչպես նաև մի քանի արխիվային փաստաթղթերից: Իր հուշերում Հովհաննես Լոռու-Մելիքյանը վկայում է. «Երբ 1872 թ. Թիֆլիսի գիմնազիա մտա, այն ատեն յեղափոխական մտավորական շարժումը ծայր տալ սկսած էր, որուն առաջինը ըլլալով հայոց մէջ, ես միացա 1879 թ., հետո Յակոբ Քոչարեանը: Իսկ մեր քաղաքական-տնտեսական դասախոսություններին եռանդուն կիեռնէին Միմոն Զավարեան և ուրիշներ: Կոմիտէ մը կազմեցինք, որ կապ հաստատեց Պետերբուրգի մէջ սոցիալիստ յեղափոխական «Նարոդնայա վոլեա» կազմակերպության հետ: Ավելացնեմ, որ մեր կազմը միջցեղային էր, որու մէջ կային և ռուսներ, և վրացիներ և հայեր»⁴:

1880-ական թվականների սկզբներից Կովկասում զգալի ակտիվացում ապրած հեղափոխական շարժումներին զուգահեռ լայն տարածում են ստանում տարբեր բնույթի ինքնազարգացման խմբակները: Գևորգ Ղաբաջյանը (Արկումեդ) իր հիշողություններում վկայում է, որ «79-80-81 թուականներին կային բազմաթիվ ուսանողական-աշակերտական կրուժոկներ: Այդ խմբերի (10-15 հոգուց բաղկացած) ժողովները տեղի էին ունենում անլեզալ, գիշերները, թեև ոչ պարբերաբար: Նրանք հետապնդում էին ինքնազարգացման և ինքնակրթման նպատակներ»⁵:

Նույնն է հավաստում Մ. Զավարյանը՝ գրելով. «...80-ական թուականներին մեծ ծառայ էին ստացել ինքնազարգացման գաղտնի խմբակներն ու շրջանակները: Այդ շրջանակները կազմուած էին 5-10 անձերից, շատ անգամ տարբեր դպրոցների տարբեր ազգութիւնների երկսեռ աշակերտներից: Խմբերի նպատակն էր լրացնել դպրոցական ծրագրի բացերը՝ ավելի լաւ կերպով իւրացնել տալով բնագիտութիւնը, պատմութիւնը,

3 Զավարեան Մ., նույն տեղում:

4 Մեջբերումը ըստ՝ Ներսիսյան Մ.Գ., Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում, Եր., 1940, էջ 41-42:

5 Ղաբաջեան Գ., (Արկումեդ), Անցեալի յիշողութիւններից, Թիֆլիս, 1918, էջ 9:

ծանօթանալ քաղաքատնտեսութեան և, մանաւանդ, կարդալ ու քննել ազատական-յեղափոխական գրականութիւնը: Սովորաբար, խմբակը ունէր իր ղեկավարը ասելի փորձուած ու զարգացած ընկերներից, որոնք, ըստ մեծի մասին, նշանակուում էին «մայր» խմբի կամ քաղաքի «պրօպագանդայի» մարմնից»⁶:

1880-ական թվականների սկզբներին Թիֆլիսում այնքան էր մեծացել նարոդնիկական խմբակների թիվը, որ «Նարոդնայա վոյա» կազմակերպությունը հարկ համարեց Կովկաս գործուղել իր Գործադիր կոմիտեի անդամ Կորոզին, որն էլ այստեղ կազմակերպեց կենտրոնական ղեկավար մարմին: Նրա մեջ հայերից մտնում էին Գր. Տեր-Գրիգորյանը, Աբրահամ Դաստակյանը, իսկ վրացիներից՝ Վասիլ Մուլխանովը, Վասիլ Ռուխելաձեն և Աննա Մուլխանովան⁷: Հետագայում նրանց միացան Միմոն Զավարյանը, Արսեն Թոխմախյանը, Ալեքսանդր Պետրոսյանը (Սանդալ), Միմոն և Սրապիոն Տեր-Գրիգորյան եղբայրները, Գրիգոր Աղաբաբյանը և Դավիթ Ներսիսյանը: Խմբակի աշխատանքներին մեծ օժանդակություն էր ցույց տալիս Բր. Միքայելյանը⁸:

Կենտրոնական խմբակի աշխատանքներին ակտիվորեն մասակցում էին նաև գիմնազիայի վերջին դասարանի աշակերտ Բեստուժևը և Պետերբուրգի համալսարանից վտարված Մելիք-Ալավերդյանը⁹: Ազգային խառը կազմ ունեցող այս մարմինը գոյատևում է մինչև 1882 թ. և այդ ընթացքում տանում է մեծ ծավալի աշխատանք: Հարկ է նշել, որ ցարական ոստիկանությունը քաջատեղյակ էր նրա աշխատանքներին՝ շնորհիվ իր գործակալի՝ Իվան Օկլադսկու, որը գործում էր Իվանով անվան տակ:

Մասնավորապես Օկլադսկու միջոցով ժանդարներիան տեղեկատվություն է ձեռք բերում այն մասին, որ այս ղեկավար խմբակը նպատակ ունի կազմակերպել գաղտնի տպարան, պատրաստել կեղծ անձնագրեր, դիւնամիտ, ռումբեր և այլն¹⁰:

Կենտրոնական խմբակի անդամներից ամեն մեկը, այդ թվում՝ Զավարյանը, միաժամանակ հանդիսանում էր առանձին ենթախմբակի ղեկավար: Ենթախմբակների մեջ մտնում էին տեղի առաջադեմ մտավորականության ներկայացուցիչները, Թիֆլիսի գիմնազիաների աշակերտները, Ռուսաստանի տարբեր կենտոններում սովորող կովկասցի ուսանողները, ինչպես նաև Կովկաս արքտրված ռուս նարոդնիկները: Այս ենթախմբակների ղեկավարներից իրենց ակտիվությամբ աչքի էին ընկնում Ս. Զավարյանը, Ա. Դաստակյանը, Թ. Ադամյանը, Գր. Տեր-Գրիգորյանը, որոնք սերտ կապեր ունեին Թիֆլիս արքտրված ռուս նարոդնիկ Ալեքսանդր Մեմյոնովի հետ¹¹: Ընդ որում՝ հետագայում Զավարյանին Մեմյոնովը հիշատա-

6 Զաւարեան Ս., Յիշողութիւններ ութսունական թուականներից, «Վաթսուսամեակ (1890-1950) Հ.Յ.Գ.» էջ 20:

7 Տե՛ս Գիւլխանդանեան Ա. Յեղափոխական խմբումները Թիֆլիս քաղաքի և նահանգի մէջ, «Հայրենիք», Պոսթըն, 1940, N 9, էջ 91:

8 Տե՛ս Ռուբէն Խան-Ազատ, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք», Պոսթըն, 1927, N 8, էջ 67:

9 Տե՛ս Иван Окладский в Тифлисе, "Былое", 1924, N 25, с. 96.

10 Տե՛ս նույն տեղում:

11 Տե՛ս ГАРФ, Ф. 102. 5-ое дво., д. 2626, л. 19.

կում էր որպես առավել մտերիմ և վստահելի անձնավորություն¹²:

1882 թ. Սեյնոսվը տպագրության է պատրաստում «Կովկասի երիտասարդությանը» ուղղված իր կոչ-բրոշյուրը, որում վերլուծության է ենթարկում Կովկասում հեղափոխական կազմակերպությունների մեջ առկա տարածայնությունները: Նախատեսված էր, որ 1882 թ. Պետերբուրգ ուսանելու մեկնած Թամարա Ադամյանը իր հետ պետք է վերցնէր կոչի բնօրինակը և այն տպագրության պատրաստեր նարոդովոյան ընդհատակյա տպարաններից մեկում: Սակայն բրոշյուրի բնագիրը ընկավ Ժանդարմերիայի ձեռքը և Թամարա Ադամյանը մեկնեց առանց դրա¹³:

Սեյնոսովն իր բրոշյուրում քննադատում էր Կովկասի երիտասարդությանը դեպի ազգային խնդիրները հակման համար: Այս կապակցությամբ նա օրինակ էր բերում ռուս երիտասարդությանը, որը անձնուրացաբար հեղափոխական պայքարի է ելնում՝ իր գլխից վանելով ամեն տեսակի «ազգային ցնդաբանություն»: Սեյնոսովի կարծիքով, մինչ այդ Կովկասի երիտասարդությունը, որն ուներ հիանալի ավանդույթներ, այժմ սոսկ համակրական վերաբերմունք ցույց տալով հեղափոխության համար մղվող պայքարի նկատմամբ, ըստ էության, նախապատվությունը տալիս է ազգային հիմնախնդիրներին: Քննադատելով նման պահվածքը՝ Սեյնոսովը կոչ էր անում հետևել ռուս երիտասարդության օրինակին¹⁴:

Մինչդեռ Սեյնոսովն անտեսում էր այն իրողությունը, որ Կովկասում, մասնավորապես արևելահայ երիտասարդության շրջանում, հակումը դեպի ազգային հիմնախնդիրներն ուներ իր օրելիով և սուբելիով պատճառները: Ռուս հեղափոխական նարոդնիկության շարժմանը մասնակցած հայ երիտասարդների շրջանում անցում էր կատարվում դեպի ազգային նարոդնիկությունը՝ որպես նոր երևույթ հայ իրականության մեջ: Ազգային նարոդնիկության հանդես գալու համար ազդակ հանդիսացավ Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի միջազգային դիվանագիտության քննարկումների առարկա դառնալը, ուստիև այն իր վրա բևեռեց հայ քաղաքական բոլոր հոսանքների ուշադրությունը: Մյուս կողմից՝ Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Բաֆֆու և այլոց ստեղծագործությունները ոգեշնչում էին հայ երիտասարդությանը պայքարի ելնելու Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու համար:

Այս երևույթը դիպուկ է բնութագրել ինքը՝ Մ. Զավարյանը. «Անելորդ է ասել, որ հայ գրականության մեջ Գամառ-Քաթիպայի հետ միասին առաջին պատուաւոր տեղն էր բռնում Բաֆֆին... մեր մտքի, մեր հոգու խորքերում Չէրնիշևսկու, Նեկրասովի, Պերովսկայի կողքին, քայլ առ քայլ սկսեցին տեղ գրաւել նաև Նալբանդեանը, Բաֆֆին, Կարօն ու Աւլանը...: Այս շաղախը, աւելի ճիշտ, այս պատուաստը, ռուսացած, ռուսական ոգիով զարգացած ու սնուած երիտասարդներին կամաց-կամաց հայացրեց, իսկ հայ «ազգասէրներին» մի քիչ յեղափոխականացրեց»¹⁵:

Մյուս կարևոր ազդակը, որ նպաստեց հայ իրականության մեջ ազ-

12 Տե՛ս նույն տեղում, թ. 28:

13 Տե՛ս նույն տեղում, թ. 24:

14 Տե՛ս նույն տեղում:

15 **Զավարյան Մ.**, Յիշողություններ ութսունական թուականներից, «Վաթսունամեակ (1890-1950) Հ.Յ.Գ.», էջ 22-23:

գային նարողնիկության ձևավորմանը, Ալեքսանդր 3-րդի «սպիտակ տեռոր» էր: Այն հարվածեց հեղափոխական շարժմանը ոչ միայն մետրոպոլիայում, այլև ազգային շրջաններում՝ ստիպելով էլ ավելի հակվել դեպի տեղական խնդիրները: Կարևոր գործոն էր նաև այն, որ ժուռ հեղափոխական նարողնիկությունը, օրինակ՝ «Նարողնայա վոյս» կազմակերպությունը, 1880-ական թվականների սկզբներին իր ծրագրային փաստաթղթերում գրեթե լիովին անտեսում էր ազգային հիմնախնդիրները կամ դրանց լուծումը կապում համառուսական հեղափոխության հաղթանակի հետ¹⁶: Դա ստիպում էր տեղական գործիչներին ավելի շատ զբաղվել ազգային հիմնախնդիրներով: Ինքը՝ Ջավարյանը, այս երևույթի պատճառները իրավացիորեն բացատրում էր հետևյալ կերպ. «Ղեկավար կուսակցութեան ծայրայեղ անտարբերութիւնը դէպի մանր, ճնշուած ազգութիւնները մի կողմից, կառավարութեան **օտարաստեաց** քաղաքականութիւնը միւս, բնականաբար, առաջ բերին բնագոյական որոշ ընդդիմութիւն: Վերջինս կենդանի երևոյթի վերածուեց այն ժամանակ, երբ Ալեքսանդր Երրորդի ձերմակ տեռորը, 1881-83-ին, յաղթել ու խեղդել էր կենդանի յեղափոխական շարժումը: Շրջանակները, մանաւանդ, խմբերի հասունցած ու փորձառու անդամները այլևս օրուայ քաղաքական անցքերի հետ առնչութիւն ունեցող այրող խնդիրներ չունէին: Բնական է, որ նրանք որոնէին նոր ուղիներ, խմբերը հետաքրքրելու և շահագրգռելու նոր նիւթեր: Ահա այդ նոր ուղիներն ու նոր նիւթերը հանդիսացան **ազգային, տեղական խնդիրները...**»¹⁷:

Վերը նշված գործոնների ազդեցության տակ հակումը դեպի ազգային խնդիրները ավելի էր ուժեղանում և 1880-ական թվականների սկզբներին հիմնադրված հայ ազգային-նարողնիկական խմբակները իրենց գործունեության մեջ շեշտը դնում էին դրանց վրա:

Արդեն 1881 թ. Քրիստափոր Միքայելյանը Թիֆլիսի ազգամիջյան խառը կոմիտեի անդամների՝ Դաստակյանի և Ռուխսաձեի առջև խնդիր էր դնում «...մի քիչ աւելի մօտենալ ծայրագաւառների և առանձին ժողովուրդների կեանքի թանձրացեալ պայմաններին և այս պայմանների համապատասխան ստեղծել առանձին ազգ. կազմակերպութիւններ, որոնք միայն ի վիճակի կը լինին թափանցելու հարազատ զանգւածների մէջ»¹⁸:

Շրջադարձը դեպի ազգային հիմնախնդիրները ի վերջո պետք է հանգեցներ ազգամիջյան խառը կազմ ունեցող նարողնիկական կազմակերպությունների պատակտմանն ըստ ազգային պատկանելության: Հարկավոր էր մի առիթ, որը, Սր. Տեր-Գրիգորյանի կարծիքով, հանդիսացավ Ալեքսանդր Մեմյոնովի 1881 թ. ձմռանը (իրականում՝ 1882 թ. - Մ.Դ.) Օրթաձալայում՝ Էլիոզովի այգում կարդացած զեկուցումը: Այս զեկուցման մեջ Մեմյոնովը այն միտքն էր զարգացնում, «... թե ժուռ ազգի պատմական առաքելությունն է ի մի ձուլելու փոքր ազգերը»¹⁹, ինչը, բնականաբար, առաջ է բերում հայ և վրացի գործիչների դժգոհությունը, և կազմակեր-

16 Стів Архив “Земли и воли” и “Народной воли”, М. 1932. с. 55.

17 **Ջավարեան Ս.**, նույն տեղում, էջ 20:

18 **Միքայելեան Քր.**, Բեկորներ իմ յուշերից, «Վաթսունամեակ (1890-1950) Հ.Յ.Դ.», էջ 25:

19 Մեջբերումը ըստ՝ **Խողիխյան Գ.**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն, Եր., 2006, էջ 105:

պությունը պառակտվում է երկու առանձին՝ հայկական ու վրացական մասերի: 1882 թ. Աբր. Դաստակյանը Քր. Միքայելյանին հասցեագրված նամակում շեշտում էր. «Մեր այս կազմակերպությունը ամբողջովին կը նուիրէ իր գործունէութիւնը անբախտ հայ ժողովրդի անպաշտպան շահերին»²⁰:

Մրանով հայ իրականության մեջ սկզբնավորվում է ազգային նարող-նիկական խմբակների և կազմակերպությունների ձևավորման գործընթացը: Հայ ազգային նարողնիկական խմբակները և կազմակերպությունները մի կողմից՝ նարողնիկական գաղափարախոսության, մյուս կողմից՝ ազգային-ազատագրական պայքարի հիմնախնդիրների կրողներն էին, որոնց շարքում աստիճանաբար առաջնահերթ նշանակություն ձեռք բերեցին ազգային խնդիրները: Իսկ սոցիալական հարցերի հանդեպ իրենց դիրքորոշումներում ազգային նարողնիկական կազմակերպությունները հենվում էին նարողնիկության գաղափարախոսության վրա: Ընդ որում՝ հայ նարողնիկները չէին հրաժարվում նաև ռուս նարողնիկության գործունէության մեթոդներից և հաճախ էին դրանք կիրառում իրենց պայքարի նոր գործելադաշտում:

Ազգամիջյան խառը կազմ ունեցող կենտրոնական կազմակերպության պառակտումն ըստ ազգային պատկանելության բացասական արձագանք է գտնում Մեմյոնովի մոտ: Նա հայտարարում է, որ իսկական հեղափոխականի տեղը Թիֆլիսը չէ, և այստեղ ոչ ոք չի կարող իրեն գնահատել: Մեմյոնովի կարծիքով՝ իրական հեղափոխական գործունէություն ծավալել հնարավոր է միայն Պետերբուրգում, և ինքը պատրաստ է զոհաբերել իրեն՝ ցույց տալու համար, որ տեռորիստների կուսակցությունը գործում է Ռուսաստանում և իրենից լուրջ ուժ է ներկայացնում²¹: 1882 թ. մայիսի 13-ին նա հեռանում է Թիֆլիսից՝ հաղորդելով Ջավարյանին և Վասիլի Շամրային, որ մեկնում է Բաքու, որտեղից իր մտերիմներից դրան ձեռք կրերի և կհասնի Պետերբուրգ՝ ճանապարհին անցնելով Սարատով և Կազան: Սակայն Մեմյոնովին չի հաջողվում իրականություն դարձնել իր մտադրությունը, քանի որ նա Բաքվում չի կարողանում ձեռք բերել անհրաժեշտ գումարը: Այդ պատճառով նորից է դիմում Ջավարյանին և Շամրային՝ խնդրելով փող ուղարկել Նիժնի Նովգորոդ՝ իր ծանոթներից Նիկոլայ Մոսնովսկու հասցեով, որի մոտ էր մեկնում ինքը: Ջավարյանը և Շամրայը կատարում են Մեմյոնովի խնդրանքը՝ նրան ուղարկելով 20 ռուբլի²²:

Ջավարյանը շարունակում էր իր ակտիվ գործունէությունը՝ մասնակցելով Թիֆլիսի հայկական ազգային-նարողնիկական կազմակերպության աշխատանքներին: Ըստ էության այդ կազմակերպությունը կենտրոնական ղեկավար մարմին էր Թիֆլիսում գործող հայկական խմբակների համար, և նրա անդամներից գրեթե յուրաքանչյուրը ղեկավարում էր մի առանձին խմբակ: Այսպես օրինակ՝ Թիֆլիսի ռեալական դպրոցի աշակերտների խմբակի ղեկավարներն էին Ս. Ջավարյանը և Գ. Աղա-

20 Միքայելյան Քր., նույն տեղում, էջ 26:

21 Տե՛ս ԴԱՐՓ, ֆ. 102. 5-օբ ձեռ., ձ. 2626, լ. 52.

22 Տե՛ս նույն տեղում, թ. 53:

բաբայանը, իսկ գիմնազիայում սովորող աշակերտական խմբակը գլխավորում էին Էջմիածնեցի եղբայրներ Միմ. և Սր. Տեր-Գրիգորյան եղբայրները²³:

Նորահայտ արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Թ. Աղամյանը, ով դիտվում էր կազմակերպության գլխավոր պրոպագանդիստներից մեկը, Թիֆլիսում կազմակերպել էր կին բանվորուհիների խմբակ՝ «նրանց շրջանում հեղափոխական գաղափարներ տարածելու նպատակով»²⁴: Իսկ Թիֆլիսի դասական գիմնազիայի բարձր դասարանի աշակերտ Բեհբույթովը պրոպագանդիստական աշխատանքներ էր տանում սովորող երիտասարդության շրջանում²⁵:

Կենտրոնական ղեկավար կազմակերպությունը Քր. Միքայելյանի, Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Զավարյանի նախաձեռնությամբ սկսեց հրատարակել իր խմորատիպ օրգանը՝ «Դրոշակը»: Բացի այդ, ինչպես վկայում է իր հիշողություններում Քր. Միքայելյանը, Ս. Զավարյանը, Գր. Աղաբաբայանը և Շիրվանզադեն սկսեցին հրատարակել «Մուներտիկ» թերթը, իսկ մեկ այլ խմբակ՝ Միմ. և Սր. Տեր-Գրիգորյան եղբայրների ղեկավարությամբ, ձեռնամուխ եղավ «Հայրենասերի ձայն» թերթի հրատարակմանը:

Այս թերթերի բնօրինակները չեն պահպանվել: Այնուհանդերձ, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ «Մուներտիկը» ավելի արմատական էր, ուներ հեղափոխական երանգ և անգամ առաջարկում էր պայքարել զենքով, իսկ «Հայրենասերի ձայնը» չափավոր բնույթ ուներ և նպատակահարմար էր գտնում շեշտը դնել մայրենի լեզվի ուսուցման վրա: Բնականաբար, երկու թերթերն էլ շոշափում էին Հայկական հարցը և կոչ էին անում երիտասարդությանը փրկել արևմտահայությանը օսմանյան լծից:

Կազմակերպությունը փորձում էր գործնականորեն իրականացնել իր կողմից առաջ քաշված գաղափարները: Զավարյանը ակտիվորեն մասնակցում է կենտրոնական կազմակերպության աշխատանքներին, սակայն այս շրջանում նա ենթարկվում է ժանդարների պահապան հսկողությանը: Բանն այն է, որ 1884 թ. մայիսին Թիֆլիսից անլեզալ կերպով հեռացած Մեմյոնովը ձերբակալվում է Նիժնի Նովգորոդում նույն թվականի մայիսի 28-ին: Նա իր ցուցմունքներում խոստովանում է, որ Թիֆլիսից հեռանալիս իրեն աջակցել են Զավարյանը և Շամրայը²⁶: Զավարյանին կանչում են հարցաքննության, սակայն նա կատեգորիկ կերպով ժխտում է իր որևէ առնչությունը Մեմյոնովի հետ: Բայց վերջինիս խոստովանությունից հետո Զավարյանին՝ Շամրայի հետ միասին, ընդգրկում են հետաքննության մեջ²⁷: Հետաքննության ավարտից հետո Կովկասի քաղաքացիական վարչության ղեկավարությունը իր միջնորդությամբ առաջարկում է Ներքին գործերի մինիստրությանը՝ Զավարյանին ենթարկել ոստիկանության բացահայտ հսկողության՝ մեկ տարի ժամկետով: Սակայն այս միջնորդությունը 1884 թ. հոկտեմբերի 9-ի որոշմամբ մերժվում է²⁸:

23 Տե՛ս Միքայելյան Քր., նույն տեղում, էջ 27:

24 ГАРФ, Ф.102, 3-е дво., оп. 1883 г., д. 688, л. 30.

25 Տե՛ս նույն տեղում, թ. 3:

26 Տե՛ս ГАРФ, Ф.102, 3-е дво., оп. 1883 г., д. 688, л. 52.

27 Տե՛ս նույն տեղում:

28 Տե՛ս Деятели революционного движения в России. Био-библиографический словарь. От предшественников декабристов до падения царизма, М. 1934, т.3, вып. 2, с. 1459.

Այս դեպքերից հետո էլ Զավարյանը շարունակում էր իր ակտիվ մասնակցությունն ունենալ տարբեր խմբակների ու կազմակերպությունների գործունեությանը: Թիֆլիսի ռեալական գիմնազիան ավարտելուց հետո նա մեկնում է Մոսկվա, ընդունվում է Պետրոպլյան գյուղատնտեսական ակադեմիան և այստեղ նույնպես մասնակցում հայ ուսանողների հիմնած կազմակերպությունների գործունեությանը: Շուտով, սակայն, ցարական ժանդարմերիան, հայտնաբերելով Պետերբուրգում հայ ուսանողների հիմնադրած կազմակերպությունը, կարողանում է բացահայտել վերջինիս կապերը Մոսկվայում գործող հայկական երկու այլ խմբակներ հետ, որոնք իրենց հերթին նույնպես սերտորեն կապված էին իրար²⁹: Ժանդարմերիայի հաշվետվության մեջ առաջին խմբակի անդամներից հիշատակվում էին Մոսկվայի համալսարանի ուսանողներ Խաչատուրովը, Հովհաննիսյանը և Կախարիանին: Երկրորդ խմբակի մեջ, ըստ ժանդարմերիայի ձեռք բերած տեղեկությունների, մտնում էին Զավարյանը, Շահնազարովը, Տեր-Ստեփանովը, Գյուզալովը և Քվամելը: Խմբակների միջև կապը իրականացնում էին ոստիկանական դեպարտամենտին իրենց անբարեհուսությամբ հայտնի Կուրտանովսկայան, Լուսակինը, Զոլոտովը և Կրոնխֆելդը³⁰:

Ինչպես նշվում էր Մոսկվայի օբեր-պոլիցմեյստերին ուղղված ոստիկանության հաշվետվության մեջ, այս խմբակների գործունեության մեջ աչքի ընկնող դեր են կատարել Զավարյանը և Գյուզալովը, որոնք հանդիսանում էին հավաքույթների և երեկույթների նախաձեռնողները: Բացի այդ Գյուզալովը Պետրովսկի ակադեմիայում հիմնել էր մասնավոր գրադարան, որտեղ պահվում էր նաև անլեզալ գրականություն: Իսկ Տեր-Ստեփանովը և Շահնազարովը ամենասերտ հարաբերությունների մեջ էին ակադեմիայի նախկին ուսանողներ, քաղաքական անբարեհուսությամբ աչքի ընկած Մոսնովսկու և Մուխանովի հետ³¹:

Ձեռքի տակ ունենալով այս բոլոր տվյալները՝ Ոստիկանության դեպարտամենտը 1888 թ. դեկտեմբերի 30-ին դիմում է Մոսկվայի օբեր-պոլիցմեյստերին՝ խնդրելով «Մոսկվայի համալսարանի և Պետրոպլյան հողագործական ակադեմիայի հայկական խմբակների անդամների գործունեության նկատմամբ հաստատել գաղտնի հսկողություն³²: Դրա շնորհիվ ժանդարմերիան պարզում է, որ խմբակի հիմնական խնդիրներից էր «գանձարկղի շրջանառությունը ընդլայնելը կարիքավոր ուսանողներին և քաղբանտարկյալներին օգնելու համար: Այդ նպատակով կազմակերպվում էին երեկույթներ, որոնցից հաճախ ստացվում էր զգալի շահույթ: Գլխավոր նվիրատուները հանդիսանում էին Մոսկվայի հայ վաճառականները³³:

Ոստիկանությունը կարողանում է պարզել նաև, որ բացի վերը նշված ուսանողներից, Պետրոպլյան ակադեմիայի հայկական խմբակի անդամներից էին նույն Ակադեմիայի ուսանողներ Գաբրիել Դանիել-Բեկյանը, Միխայիլ Վերմիշևը, Մերգել Մելիք-Սարգիսովը, Նիկոլայ Իսարովը, Գաբրիել Մարդբեդաձեն, նույն ակադեմիայի ունկնդիր Վարդիս Տեր-Հովհանեսովը

29 Տե՛ս ԴԱՐՓ, Փ.102, 3-е дво., оп. 1888 г., д .297, л. 11.

30 Տե՛ս նույն տեղում:

31 Տե՛ս նույն տեղում, թ. 12:

32 Տե՛ս նույն տեղում, թ.14:

33 Տե՛ս նույն տեղում, թ. 27:

և Դմիտրի Լևանով Տուլանը: Ինչ վերաբերում է Մարիա Կուրտանովսկայային, Ինսարովին և Կվալսևին, ապա նրանք խմբակի մեջ խաղում էին աչքի ընկնող դեր և զբաղվում էին անլեզու գրականություն տարածելով և քաղբանտարկյալների օգտին տոմսակներ վաճառելով³⁴:

Այն, որ հայկական այս խմբակների մեջ մտնում էին նաև ռուս նարողնիկ գործիչներ, վկայում էր, որ նարողնիկության ազդեցությունը դեռևս զգալի էր: Դա հաստատում է Մ. Շաթիրյանը՝ իր հիշողություններում վկայելով, որ ռուս հեղափոխական շարժմանը հարում էին Ստ. Շահվերդյանը, Միմոն Զավարյանը, Գաբրիել Դանիել-Բեկյանը և ուրիշներ³⁵:

Բայց Մոսկվայի և հատկապես Պետերբուրգի հայ ուսանողությունը այս շրջանում ավելի ու ավելի էր հակվում դեպի ազգային հարցերը: Այդ երևույթի արտահայտությունը եղավ Պետերբուրգի ուսանողության նախաձեռնությամբ 1889 թ. Մոսկվայում հրավիրված հայ ուսանողների համագումարը, որտեղ Պետերբուրգի ուսանողության ներկայացուցիչները հանդես եկան անմիջապես գործունեություն ծավալելու առաջարկով:

Իսկ Մոսկվայի այսպես կոչված՝ «երկրականների» խումբը գտնում էր, որ նախ՝ պետք է ուսումնասիրել Արևմտյան Հայաստանը և ապա միայն գործել: Այս տեսակետների բախման պատճառով համագումարը չեկավ ընդհանուր հայտարարի, և չստեղծեց մեկ միասնական կազմակերպություն: Սակայն հետևանքը եղավ այն, որ առանձին խմբեր փորձեցին կոնկրետ քայլեր ձեռնարկել՝ հստակեցնելու իրենց դիրքորոշումը ազգային խնդիրների նկատմամբ:

Մոսկվայի համագումարից հետո նրա մասնակիցների զգալի մասը, այդ թվում՝ Ս. Զավարյանը, վերադառնում է Թիֆլիս: Այս շրջանում՝ 1889 թ. ձմեռանը, Քր. Միքայելյանի բնութագրմամբ՝ «...պրոպագանդն արդեն այնքան լայն էր տարածուած, որ զգացուեց կազմակերպական կանոնագրի ու աշխատանքների ծրագրի մշակման անհրաժեշտութիւնը: Այսպիսով՝ առաջ եկաւ «Երիտասարդ Հայաստան» կազմակերպութիւնը, որ հետագային ստացավ «Իւժնիէ Նոմերայի Խմբակ» անունը, որովհետև «Իւժնիէ Նոմերա» հիւրանոցի մեջ էին ապրում մի քանի ընկերներ, որոնց մօտ էին, յաճախ, տեղի ունենում ժողովները»³⁶:

«Երիտասարդ Հայաստան» կազմակերպության աչքի ընկնող անդամներից էին Ս. Զավարյանը, Ավ. Սահակյանը, Մ. Շաթիրյանը, Ա. Նազարեթյանը, Հակ. Քոչարյանը, Արշ. Թադևոսյանը: Ուշագրավ է, որ կազմակերպության մեջ մտնում էին նաև զգալի թվով կանայք: Նրանցից էին Ս. Զավարյանի քույրը՝ Մարոն, Սաթենիկ և Նատալիա Մատինյան քույրերը, Դ. Գոշայանը, Ա. Սահակյանը և ուրիշներ: Զուգահեռաբար՝ Պետրոլյան ակադեմիան փայլուն կերպով ավարտած Զավարյանը գյուղատնտեսության բնագավառում գիտական հետազոտություններ էր իրականացնում Արևմտյան Վրաստանում (Իմերեթիայում): Սակայն շուտով ընկերները նրան կանչում են Թիֆլիս...

34 Տե՛ս նույն տեղում:

35 Տե՛ս Մ. Շ. -ի յուշերը, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք», Պոսթոն, 1923, N 5, էջ 27:

36 Միքայելյան Քր., Բեկորներ իմ յուշերից, նույն տեղում, էջ 35-36:

ՆԱԽԱԲԱՅՆ

Ե (ԺԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

1890 թ. օգոստոսին, Միքայելյանի վկայությամբ՝ «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության կողքին սկսեց կազմակերպել մի նոր գաղտնի կոմիտե»³⁷: Դրանով սկիզբ դրվեց **Հայ Յեղափոխականների Դաշնակցությանը...**

Summary

NARODNICAL PERIOD OF ZAVARYAN'S ACTIVITY

Mkrtich D. Danielyan (Vanadzor)

In the article we have analyzed the Pre-ARF and National (Narodnical) period of S. Zavaryan's activity, who was one the founders of Armenian Revolutionary Union and influential figure of Armenian National Liberty Movement. According to the contemporaries, memoires and newfound archive documents S. Zavaryan's activity and his participation in national narodnical different organizations, work group and his connection with Russian Narodnical members are presented. In the article we have reference to Zavaryan's gradual transition into the problems of national liberty movement, his evolution as national political activist and from national parties to one of AR Federation founders.

³⁷ Տես նույն տեղում: